Երևանի պետական համալսարան

Շարունակական կրթության կենտրոն

Բաց կանչ հետազոտողների համար

«Գիտության ոլորտում կանանց մասնակցությունն ու կարիերայի առաջընթացը խոչընդոտող գործոններն ու մարտահրավերները Հայաստանում»

Որակական հետազոտություն

Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) շարունակական կրթության կենտրոնը (ՇԿԿ) հայտարարում է **հետազոտական դրամաշնորհի մրցույթ**, որին կարող են մասնակցել ԵՊՀ հետազոտողներ և հետազոտական խմբեր:

Ակնկալվում է, որ հետազոտությունն իրականացվելու է 2026թ. մարտ-հունիս ամիսներին: Վերջնական հաշվետվության ներկայացման ժամկետը հունիսի 20-ն է:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ **2026թ. մարտի 10՝ ժամը 24:00:**

Հետազոտությունն իրականացվում է «Գիտության ոլորտում Կանանց և աղջիկների մասնակցության խթանում» ծրագրի ներքո՝ Գերմանիայի կառավարության ֆինանսավորմամբ, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Ֆեմինիզմը գործողության մեջ հանուն համակարգային փոխակերպման (FAST)» և «Կանանց հզորացում հանուն բարեկեցության» (WoW) ծրագրերի շրջանակում:

Համատեքստ

Չնայած բարձրագույն կրթություն ունեցող կանանց թվի աճին՝ գիտական հետազոտություններում տղամարդկանց և կանանց ներգրավվածության միջև դեռևս առկա է զգալի տարբերություն: ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտի (UIS) տվյալները վկայում են, որ 2021 թվականի դրությամբ կանայք կազմում էին աշխարհի հետազոտողների ընդամենը 31.7%-ը:[1]

Հայաստանում, թեև կանանց ներկայությունը նշանակալի է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կենսաբանությունը (74%) կամ քիմիան (64.8%), այն զգալիորեն ավելի ցածր է մաթեմատիկայի (12.5%), մեխանիկայի (21.1%), ֆիզիկայի և

[1] The gender gap in science: status and trends, February 2024: https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000388805

աստղաֆիզիկայի (25.3%) ոլորտներում:[2] Պատկերը գրեթե նույնն է նաև ԵՊՀ-ում: Ըստ ԵՊՀ ներքին տվյալների, ԲՏՃՄ ոլորտներում (ներառյալ կենսաբանությունն ու քիմիան, որտեղ կանանց թիվը սովորաբար ավելի բարձր է) դասախոսական կազմի 402 անդամներից միայն 155-ն են կանայք, այսինքն՝ մոտավորապես 38.5%: Միևնույն ժամանակ, ղեկավար պաշտոններում կանանց թիվը նույնիսկ ավելի փոքր է. ԲՏՃՄ ոլորտներում գործող 29 ամբիոններից միայն 8-ն են ղեկավարում կանայք: Վերջապես, ԲՏՃՄ ոլորտներում (ներառյալ կենսաբանությունը) սովորող 1888 ուսանողներից միայն 844-ն են կին:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Սույն որակական հետազոտության նպատակն է պարզել թվերի ու վիճակագրության հիմքում ընկած խորքային պատճառները, կանանց մասնակցությունը խթանող և խոչընդոտող հագամանքները, ինչպես նաև հանդես գալ իրավիճակը փոխելու առաջարկներով:

Հետազոտությունը պետք է պատասխանի առնվազն հետևյալ հարցերին.

- Ինչու՞ են կանայք ավելի քիչ ընդգրկված ԲՏՃՄ ոլորտներում:
- Ի՞նչ խնդիրներ ունեն ԲՏՃՄ ոլորտներում աշխատող կանայք:
- Որո՞նք են այն խոչընդոտները, որոնց բախվում են ԲՏՃՄ ոլորտներում գիտությամբ զբաղվող կանայք:
- Ինչպիսի՞ միջավայրային, սոցիալական, աշխատանքային և այլ խնդիրներ կան, որոնք չեն նպաստում կանանց առաջխաղացմանն այս ոլորտներում:
- Արդյո՞ք կան գենդերային դերերին, խտրականությանը, կարծրատիպերին առնչվող խոչընդոտներ և ինչպե՞ս են պատկերացնում դրանց հաղթահարումը:
- Որո՞նք են այն խոչընդոտները, որոնց բախվում են կանայք՝ պայմանավորված սոցիալական կարգավիճակով, տարիքով, բնակության վայրով, հաշմանդամությամբ կամ անձնական և սոցիալական բնույթի այլ հանգամանքներով:
- Կանանց ընդգրկվածությանն ու առաջխաղացմանը նպաստող ի՞նչ պետական քաղաքականություններ և ինստիտուցիոնալ մոտեցումներ կան, արդյո՞ք դրանք բավարար են:
- Ի՞նչ փոփոխություններ են անհրաժեշտ ոլորտում՝ կանանց ներգրավվածությունը մեծացնելու և առաջխաղացմանն օժանդակելու համար:

Հետազոտության արդյունքներն անհրաժեշտ է ամփոփել հաշվետվությամբ, որը պետք է նաև քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման և/կամ փոփոխության կոնկրետ առաջարկներ ներկայացնի:

[2] Armenian Women in Science: An Analytical and Bibliometric Study of Current Trends: https://www.researchgate.net/publication/390270243_Armenian_Women_in_Science_An_Analytical_and_Bibliometric_Study_of_Current_Trends

Ո՞վ կարող է մասնակցել

Դրամաշնորհային մրցույթին կարող են դիմել այն հետազոտողները, որոնք ունեն որակական հետազոտության փորձ և հմտություններ: Երկու-երեք հոգուց բաղկացած միջգիտակարգային հետազոտական թիմերի ներկայացրած հայտերը կունենան մրցութային առավելություն: Հետազոտական թիմում կարող են նաև ներգրավված լինել մագիստրատուրայի ուսանողներ:

Մրցույթի արդյունքում հանձանժողովի կողմից կընտրվի մեկ հայտ, որը ներկայացրել է մրցույթի պայմաններին համապատասխանող լավագույն առաջարկը:

Մեթոդաբանական մոտեցում

Հետազոտության շրջանակ

Հայտատուներն ազատ են ընտրելու իրենց հետազոտության շրջանակի ծավալը՝ ելնելով մեթոդաբանական հիմնավորումից: Սակայն անհրաժեշտ է ապահովել առնվազն հետևյալը.

- որոշակիորեն հիմնավորված սկզբունքներով ձևավորված ընտրանքով ընդգրկել ինչպես համալսարանական, այնպես էլ Գիտությունների ակադեմիայի կազմում գործող հաստատություններ, ինչպես նաև դպրոցներ:

Ընտրանքի հիմնավորումն անհրաժեշտ է ներկայացնել հայտում՝ բացատրելով ընտրության տրամաբանությունը, մեթոդաբանական նպատակահարմարությունը և այլն:

Հետազոտության մեթոդներ

Հայատատուները պետք է ներկայացնեն հետազոտության հստակ մեթոդաբանություն՝ ներառելով տվյալների հավաքման և վերլուծության նախընտրելի որակական գործիքներն ու մոտեցումները: Հնարավոր մեթոդների ցանկը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- կոնկրետ դեպքի ուսումնասիրություն,
- որակական հարցազրույցներ, ֆոկուս խմբային քննարկումներ,
- առկա փաստաթղթերի և քաղաքականությունների վերլուծություն՝ գործող ռազմավարությունների ու ծրագրերի ուսումնասիրություն և հիմնավորված առաջարկների մշակում:

Ընտրված հետազոտողը/թիմը մեթոդաբանության վերջնական տարբերակը կներկայացնի պայմանագրի կնքումից հետո:

Ֆինանսավորում

Ընտրված հետազոտական խումբը կամ անհատ հետազոտողը կստանա ֆինանսական աջակցություն հետազոտությունն իրականացնելու համար: Ֆինանսավորման չափը 1. 800. 000 ՀՀ դրամ է (հարկերը ներառյալ):

Իրականացման ժամանակացույց և ակնկալվող արդյունքներ

Ի՞նչ	*Ե՞րբ*
Վերջնական մեթոդաբանության ներկայացում/հաստատում	30-ը մարտի, 2026 թ.
Հետազոտության իրականացում/դաշտային աշխատանք	Ապրիլ-մայիս, 2026թ.
Արդյունքների վերլուծություն, հաշվետվության և պատրաստում	20-ը հունիսի, 2026 թ.
Արդյունքների ներկայացում, կլոր սեղան-քննարկման կազմակերպում և քաղաքականության փաստաթղթի մշակում	20-ը հուլիսի, 2026 թ.

Ընտրության չափանիշներ

Հայտերը կգնահատվեն հետևյալ չափանիշներով՝

- թեմատիկ համապատասխանությունը – 20 միավոր,
- մեթոդաբանական հիմնավորվածությունը – 40 միավոր,
- հետազոտողի փորձը/ հետազոտական խմբի կազմը – 30 միավոր,
- հայտի ընդհանուր որակը – 10 միավոր:

Մրցույթին դիմելու կարգը

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել կից հայտադիմումը և ուղարկել cce@ysu.am էլեկտրոնային հասցեին՝ մինչև **սույն թվականի մարտի 10-ը**՝ ժամը 24:00-ն: Ավելի ուշ ներկայացված հայտերը չեն դիտարկվի:

Հարցերի դեպքում՝ (374 60) 710 212 :